

ԵՎՐԱՍԻՆՏԵՐԻՄ

ԵՎՐԱԶԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԸՆԹԱՅՆ ԱՌԿԱ Է, ԹԵՏՎ ԱՆԵԼԻՔՆԵՐ ԴԵՌ ԿԱՆ



Հունիսի 21-22-ը Ստոկհոլմում Եվրահանձնաժողովը քննարկեց Վրաստանի, Ուկրաինայի ու Մոլդովայի կողմից Եվրամիության անդամակցության առաջընթացն ու ներկայացրեց միջանկյալ հաշվետվություն:

Ինչպես հայտարարեց Եվրոպայի հարեւանության քաղաքականության եւ ընդլայնման հարցերի եվրահանձնակատար Օլիվեր Կահրեյնը, Վրաստանը Եվրահանձնաժողովի կողմից թեկնածուի կարգավիճակի ստացման համար ներկայացված 12 հանձնարարությունից կատարել է 3-ը: Ըստ Եվրահանձնակատարի, առաջինը գեոգրաֆիկ իրավահավասարության եւ կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարն է, երկրորդը՝ Եվրոպայի մարդու իրավունքների դատարանի որոշումների հաշվառումը եւ երրորդը՝ ժողովրդական պաշտպանի նշանակման գործընթացի թափանցիկությունը: Ըստ Կահրեյնի, Եվրահանձնաժողովի մնացած յոթ հանձնարարության ուղղությամբ եւս վավերացվել է որոշակի առաջընթաց: Մասնավորապես, նկատելի դրական տեղաշարժեր են գրանցվել քաղաքական բեռնականացման, պե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՂԱԶԱԽՍՏԱՆ

ԸՆԴՊԾՎԵՑ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Հունիսի 22-ին, պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Ղազախստանի վարչապետ Ալիխան Սմայիլովը:

Այցի շրջանակներում, կայացավ Վրաստանի եւ Ղազախստանի վարչապետերի առանձնազրույցը, որին հաջորդեց պատվիրակությունների լիակազմ նիստը:

Բանակցությունների ընթացքում կողմերը կարեւորեցին երկկողմ հարաբերությունների զարգացման դինամիկան, նշեցին համագործակցության ծավալների մեծացման կարեւորությունը, կանխագծեցին համագործակցության նոր հեռանկարները: Հանդիպման ավարտին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին եւ Ղազախստանի վարչապետ Ալիխան Սմայիլովը հանդես եկան համատեղ ասուլիսում:



ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՆԱԹԻԱ ԹՈՒՐՆԱԿԱ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԱՊԱՑՈՒՑԵՑ ԻՐ ՀՋՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՅՊԱՆԵՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՁՐ ՎԱՐԿԱՆԻՇԸ»



Հունիսի 22-ին Վրաստանի Ազգային բանկում անցկացվեց խորհրդի նիստ, որտեղ Վրաստանի Ազգային բանկի փոխնախագահ ընտրվեց Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման 2019-2022 թվականների նախարար, 2022 թվականից Ազգային բանկի խորհրդի անդամ Նաթիա Թուրնալան, որը կզբաղեցնի առաջին փոխնախագահի պաշտոնը եւ, հետեւաբար, կլինի նաեւ նախագահի պաշտոնակատարը:

Ներկայացնելով Ազգային բանկի գործունեության իր հայեցակետը, Նաթիա Թուրնալան նշեց, որ Վրաստանի ֆինանսական համակարգը բոլորին ապացուցել է իր ֆինանսական հզորությունը եւ պահպանել բարձր միջազգային վարկանիշը:

Նրա խոսքով, կառավարության արդյունավետ տնտեսական քաղաքականությանը զուգահեռ, մեծ դեր է խաղացել Ազգային բանկի ճիշտ եւ զգույշ դրամավարկային քաղաքականությունը:

- Մինչ ամբողջ աշխարհը բախվել է այնպիսի գլոբալ մարտահրավերի, ինչպիսին է գնաճը կոշտ դրամավարկային քաղաքականության (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«EBRD»՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

283 ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՎԵԼ Է 5 ՄԻԼԻԱՐԴ ԵՎՐՈ

Հունիսի 21-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին «Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի» («EBRD») տնօրենների խորհրդի անդամների հետ հանդիպմանը քննարկեց Վրաստանի կառավարության եւ «EBRD»-ի միջեւ հաջող համագործակցությունը եւ այն կարեւոր ծրագրերը, որոնք իրականացվում են ինչպես պետական, այնպես էլ՝ մասնավոր հատվածում, «Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի» աջակցությամբ:

Նշվեց, որ «Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը» Վրաստանում 283 նա-

խագծերում ներդրել է մոտ 5 մլրդ եվրո: Վարչապետի խոսքով, «EBRD»-

ի աջակցությունն անգնահատելի է երկրի առաջնահերթ ոլորտների ֆինանսավորման առումով:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՑ ՀԵՏՈ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԺ-Ն ԵՎՍ ԶԵՌՆԱՄՈՒՄ ԵՂԱՎ ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՄԱՀՄԱՆԸ ԻՐ ՔԱՐՏՈՎ ՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

Հայաստանի Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել վրաց-հայկական համաձայնագրին, որով Վրաստանի եւ Հայաստանի քաղաքացիները կկարողանան փոխադարձ ճամփորդել առանց մուտքի արտոնագրի՝ սահմանապահին ներկայացնելով միայն նույնականացման քարտը (ID քարտ):

Նշենք, որ Վրաստանի խորհրդարանն արդեն վավերացրել է փաստաթուղթը, սակայն նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին դեռ չի ստորագրել օրենքը:

Համաձայնագրին ուժի մեջ մտնելուց հետո, Վրաստանի եւ Հայաստանի քաղաքացիները վրաց-հայկական սահմանը կհատեն ID քարտով՝ առանց անձնագրի:



Այս պահի դրությամբ վրաց-հայկական սահմանը դեռեւս կարելի է հատել միայն ճամփորդական անձնագրերով:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԵՎ ՕՍԲՈՒԴԱՄԵՆԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Հունիսի 16-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ ժողովրդական պաշտպան Լեւան Իսեյիանու հետ:

Հանդիպմանն ուշադրություն հատկացվեց Վրաստանում տիրող մարդու իրավունքների պաշտպանության իրավիճակին: Կողմերն անդրադարձան 2012 թվականից հետո մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ձեռք բերված առաջընթացին: Նշվեց, որ վերջին 10 տարում իրավիճակը բարելավվել է արմատապես փոխվել է այս առումով:



Կարեւորվեց Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության երկու փաստաթուղթ, որոնցից առաջինը վերաբերում է 2014-2020, իսկ երկրորդը՝ 2022-2030 թվականներին:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻԼԻԱ ԴԱՐՉԻԱՆՎԻԼԻ. «ԹԲԻԼԻՍԻԻ ՆՊԱՏԱԿԸ ՀԱՅ-ԱՂԻԲԵԶԱՆԱԿԱՆ ԵՐԿԻՆՈՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ Է»

Վրաստանի խորհրդարանում «Կառավարության ժամին» իր ելույթի ժամանակ արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլին հայտարարել է, որ Վրաստանի արտաքին քաղաքականությունը հարեւան երկրների նկատմամբ կենտրոնացած է հավասարակշռված, գործընկերային հարաբերությունների եւ փոխշահավետ համագործակցության վրա:

Ազ նախարարը խոսել է «Խաղաղ հարեւանության նախաձեռնություն» շրջանակներում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կառուցողական երկխոսության ուղղությամբ ձեռնարկվող գործնական քայլերի մասին:

Ըստ նախարարի, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարի-

բաշվիլու հայտարարած այս նախաձեռնության նպատակը հարեւանների միջեւ երկխոսության զարգացումն է, եւ այս գործընթացում հստակ սահմանված է Վրաստանի բնական դերակատարությունը տարածաշրջանում կայունության ու խաղաղության ապահովման գործում:

ԵՎՐԱՍԻՆՏԵԳՐՈՒՄ

ԵՎՐԱՍԻՆՏԵԳՐՈՒՄԻ ԶԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՐ ԱՌԱՋՆԹԱՅՆ ԱՌԿԱ Է, ԹԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐ ԴԵՌ ԿԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տական ինստիտուտների գործառնությունն ու ընտրական միջավայրի բարելավման ուղղությամբ: Թափանցիկ եւ առավել արդյունավետ է իրականացվում դատական բարեփոխումը, ուժեղացել է հակակոռուպցիոն գործակալության անկախությունը, կազմակերպված հանցագործության դեմ պայքարը: Նշանակալի քայլեր են կատարվել մարդկանց խոցելի խմբերի իրավունքների պաշտպա-

նության ու որոշումների ընդունման գործընթացում քաղաքացիական կազմակերպությունների մասնակցության ապահովման ուղղությամբ:

Միաժամանակ, միջանկյալ հաշվետվության մեջ նշված է, որ Վրաստանը պարտավոր է դատական բարեփոխումներ ներկայացնել Վեներտիկի հանձնաժողովին: Խոսքը հիմնականում արդարադատության գերագույն խորհրդի ձեւավորման մասին է: Նախատեսված է նաեւ առավել մեծ ազատություն ապահովել հակակոռուպցիոն բյուրոյի գործունեության համար ու առավել կառուցողական հարաբերություններ հաստատել քաղաքացիական կազմակերպությունների հետ:

Նշենք, որ Եվրամիության թեկնածության կարգավիճակի ստացման համար, Վրաստանի իշխանությունները եվրահանձնաժողովի 12 հանձնարարականների վերջնական կատարման մասին հաշվետվությունը պետք է ներկայացնեն մինչեւ ընթացիկ տարվա վերջ:



ՀԱՄԱՋԱՅՆԵՑՎԵՑ ՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՊԱՏՄԱՄԻՋՈՑՆԵՐԻ 11-ՐԴ ՓԱՅԹԸ

ԵՄ երկրների ներկայացուցիչները համաձայնության են եկել Ռուսաստանի դեմ պատժամիջոցների 11-րդ փաթեթի շուրջ: Պատժամիջոցների նոր փաթեթը ներառում է միջոցների ձեռնարկում նախկինում սահմանված սահմանափակումները շրջանցելու համար, ինչպես նաեւ պատժամիջոցների՝ նոր անձանց եւ կազմակերպությունների դեմ:

Լրատվամիջոցների տվյալներով, պատժամիջոցները վերաբերել են 70 ֆիզիկական եւ 30 իրավաբանական անձանց:

ԱՌԱՋՆԹԱՅՑ՝ ԶԻՆ-ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Երկրորդ այցով Պեկինում գտնվող ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենն իր այցի վերջում հանդիպում է ունեցել Չինաստանի ղեկավար Սի Ծինփինի հետ:

- Չինական կողմը հստակ արտահայտել է իր դիրքորոշումը, եւ երկու կողմերը համաձայնել են հետեւել այն ընդհանուր փոխըմբռնմանը, որին ես եւ նախագահ Բայդենը հասել ենք Բալիում, - ասաց Սի Ծինփինը՝ նկատի ունենալով անցյալ տարվա նոյեմբերին G20-ի զագաթաժողովի շրջանակներում Բայդենի հետ կայացած հանդիպումը:

Չինաստանի նախագահը հայտարարել է նաեւ, որ երկու կողմերն «առաջընթաց են գրանցել ու համաձայնության հասել մի շարք կոնկրետ հարցերի շուրջ»:

Նախքան Սի Ծինփինի հետ հանդիպումը Էնթոնի Բլինքենն հանդիպել է նաեւ Չինաստանի Կոմունիստական կուսակցության Կենտկոմի արտաքին գործերի հանձնաժողովի գրասենյակի ղեկավար Վանգ Յինի եւ Չինաստանի արտգործնախարար Ցին Գանի հետ:

2018 թ. ի վեր սա ԱՄՆ պետքարտուղարի առաջին այցն է Չինաստան: Բացի այդ, Բլինքենը Չինաստան այցելող ամենաբարձրաստիճան պաշտոնյան է Ջո Բայդենի նախագահ դառնալուց ի վեր:

«ՏԻՏԱՆԻԿԻ» ԿՈՂՔԻՆ «ՀԱՆԳՐՎԱՆԵՑ» ՆԱԵՎ «ՏԻՏԱՆԸ»

Ատլանտյան օվկիանոսի հյուսիսում «Տիտանիկ» նավի խորտակման վայրը դիտելու մեկնած «Տիտանը» բառիսկզբում գտնվող բոլոր 5 անձինք գոհվել են: ԱՄՆ իշխանությունները բառիսկզբի հետ տեղի ունեցած անվանել են «աղետալի պայթյուն»:

Ռոբոտ սուզվող սարքը ծովի հատակին «Տիտանիկի» խորտակման վայրից գրեթե 480մ հեռավորության վրա, հայտնաբերել է սուզանավի 5 տարբեր խոշոր մասեր:

Հաղորդվում է, որ հունիսի 18-ին, երբ «Տիտանը» կորցրել էր կապն իրեն ուղեկցող նավի հետ, ԱՄՆ ռազմածովային ուժերը որսացել էին ծայրեր, որոնք նման էին պայթյունին:

Բառիսկզբի մասերի հայտնաբերումից հետո ավարտվել են 5 օր տևող որոնողական աշխատանքները, որոնց ընթացքում հետազոտվել է օվկիանոսի գրեթե 20 հազար քառ. կմ տարածություն:

Բառիսկզբում գտնվող 5 անձինք էին բրիտանացի գործարար եւ հետազոտող 58-ամյա Չեմիշ Հարդինգը, Պակիստանի ամենահարուստ մարդկանցից մեկը՝ 48-ամյա Շահադադ Դավուդը ու նրա 19-ամյա որդի Սուլեյման Դավուդը, սուզանավը գործարկող OpenGate ընկերության տնօրեն, 61-ամյա Ստոքթոն Ռաշը եւ ֆրանսիացի ծովային փորձագետ, 77-ամյա Փոլ-Անրի Նարժոլեն, որը 35 անգամ սուզվել էր դեպի «Տիտանիկի» խորտակման վայրը:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ԿՈՒԲԱԽԻՉԵ. «ՆՐԱՆՔ, ՈՎՔԵՐ ԱՋԱԿՅԵԼ ԵՆ ՍԱԱԿԱՇՎԻԼՈՒ ՍԻՍՈՒՆԱՅԻԱՅԻՆ, ՊԵՏՔ Է ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԳՐԵՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԻՅ՝



Ինչպես արդեն հաղորդել ենք, ընդդիմադիր առանձին կուսակցությունները, այսպես կոչված առանձին ոչ կառավարական եւ իրավապաշտպան կազմակերպությունները, լրատվամիջոցները ամիսներ շարունակ շահարկում էին Վրաստանի երրորդ նախագահ Միխեիլ Սաակաշվիլու առողջական վիճակի մասին տարածվող տեղեկատվությունը:

Ավելին, այդ կազմակերպությունները Միխեիլ Սաակաշվիլու հարցով դիմեցին նաեւ Ստրասբուրգի մարդու իրավունքների միջազգային դատարան: Դատարանը, օբյեկտիվորեն քննարկելով հարցը, անհիմն ճանաչեց Սաակաշվիլուն բուժման համար արտասահման տեղափոխվելու պահանջը:

Միջազգային դատարանի որոշման հրապարակումից հետո, Միխեիլ Սաակաշվիլին հանդես եկավ քաղաքականություն վերադառնալու մասին հայտարարությամբ՝ նշելով, որ ինքը մտադիր է առցանց ակտիվ մասնակցություն ունենալ երկրի քաղաքական կյանքին:

Մեկնաբանելով միջազգային դատարանի վերոնշյալ որոշումից հետո Սաակաշվիլու դիրքորոշման նման կտրուկ շրջադարձը՝ «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ Սաակաշվիլին սիմուլյացիա էր անում 600 օր, եւ այս սիմուլյացիան լայն աջակցություն ունեցավ օտարերկրացիների կողմից, ինչը շատ ցավալի է:

Նրա խոսքով, մարդիկ, ովքեր օգնել են Սաակաշվիլուն ստել, պետք է ներողություն խնդրեն հանրությունից:

- Եվս մեկ անգամ կասեմ, որ բոլոր այն մարդիկ, ովքեր պաշտպանել են Սաակաշվիլու այս սիմուլյացիան ու ստերը, պետք է ներողություն խնդրեն հանրությունից: Սրանք կոնկրետ քաղաքական գործիչներ են, կոնկրետ դիվանագետներ, նախկին ժողովրդական պաշտպանը, նրա խորհրդի անդամները եւ այլն: Այս շրջանակը բավական լայն է: Նրանք պնդում էին, որ այս մարդը 600 օրվա ընթացքում անեն օր մահանում էր,- ասաց Իրակլի Կոբախիձեն:

«ԺՈՂՈՎՐԴԻ ՈՒԺ». «ԴԱԴԱՐԵՑՐԵՔ ԼԻԲԵՐԱԼ-ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ»

«Ժողովրդի ուժ» շարժումը հայտարարություն է տարածել, ըստ որի, Վրաստանում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Քելլի Դեզնանին կոչ են անում դադարեցնել երկրի ներքին գործերին միջամտելու, կառավարությանը հակադրվող ուժերին աջակցելու, լիբերալ ֆաշիստական կազմակերպություններին ֆինանսավորելու փորձերը:



«Ոչ կառավարական կազմակերպությունների եւ ագրեսիվ քաղաքական խմբավորումների ֆինանսավորումը կրկին թափանցիկ չէ: Այսօր էլ ստույգ ոչ ոք չգիտի, թե ինչի համար եւ ինչ գումարով են ֆինանսավորվել «Սիրցխվիլիա», «Ֆրանկլինի ակումբ», «Գիրչի», «Դրոա» եւ մյուս ագրեսիվ ու բեւեռացված լիբերալ ֆաշիստական խմբավորումները: Հետեւաբար, հանրությունը տեղյակ չէ նաեւ նրանից, թե կոնկրետ ում կողմից են ինչ ծավալի ֆինանսավորում է հատկացվում հեղափոխական ծրագրին, որի մասին անթաքույց խոսում են արմատական խմբավորումները»,- ասված է «Ժողովրդի ուժ» շարժման կողմից տարածած հայտարարության մեջ:

Ինչպես նշում են հայտարարության հեղինակները, Վրաստանում ԱՄՆ դեսպան Քելլի Դեզնանը երբեք չի թաքցրել իր համակրանքը ոչ կառավարական եւ ընդդիմադիր տրամադրված քաղաքական ուժերի նկատմամբ:

«Ցանկանում ենք հարցնել Քելլի Դեզնանին՝ ինչո՞ւ հանգիստ չեն թողնում մեր երկիրը, ինչո՞ւ են ֆինանսավորում հակաազգային, հակաեկեղեցական եւ ագրեսիվ լիբերալ ֆաշիստական կազմակերպություններին, ինչո՞ւ են ֆինանսավորում եւ աջակցում բեւեռացմանը, ինչո՞ւ են արհեստական արգելքներ ստեղծում Վրաստանի կողմից թեկնածուի կարգավիճակի ստացմանը, ինչո՞ւ մոռացության տվեցին լրատվամիջոցների ազատությունը, եւ լիբերալ ֆաշիստներն արգելքի տակ դրեցին երեք հեռուստաընկերությունները: Եվ, վերջապես, ի՞նչ են սպասում, որ «Ազգային շարժմանը» իշխանության գլուխ վերադարձնելուց հետո ստանալու են եւ չեն ստացել «Վրացական երազանքից»,- նշված է հայտարարության մեջ:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՆԱԹԻԱ ԹՈՒՐՆԱՎԱ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՊԱՑՈՒՑԵՑ ԻՐ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՅՊԱՆԵՑ ՍԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՁՐ ՎԱՐԿԱՆԻՇԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

միջոցով, մենք բավական լավ փորձ ունենք այս առումով: Վերջին շրջանում գնաճը, որը Ազգային բանկի հիմնական մտահոգությունն է, բնութագրվում է անկունով: Մենք հույս ունենք, որ միջնաժամկետ հեռանկարում կհասնենք նպատակային ցուցանիշին: Սա շատ կարեւոր է, եւ Ազգային բանկը, որպես անկախ, ուժեղ կառույց, կշա-

րունակի իր գործունեությունը եւ համարժեք, զգուշավոր դրամավարկային քաղաքականությունը»,- ասաց Նաթիա Թուրնավան:

Նշենք, որ խորհրդի յոթ անդամներից հինգը աջակցել են Նաթիա Թուրնավայի թեկնածությունը, երկուսը՝ ձեռնպահ մնացել:

Նոր պաշտոնը նախատեսված է Ազգային բանկի մասին օրենքում փոփոխություններով, որոնք ուժի մեջ են

մտել խորհրդարանի կողմից նախագահի վետոն հաղթահարելուց հետո:

Անցումային շրջանում մինչեւ խորհրդում փոխնախագահներից մեկի լիազորությունների ավարտը, Ազգային բանկը կունենա չորս փոխնախագահ:

Ներկայում Ազգային բանկի խորհրդի անդամները յոթն են, Սալոմե Ջուրաբիշվիլին խորհրդարան է ներկայացրել խորհրդի անդամության

եւ երկու թեկնածու, սակայն, ամենայն հավանականությամբ, ինչպես ասում է մեծամասնությունը, նրանք չեն սատարի նախագահի ներկայացրած թեկնածուներին:

Արչիլ Մեստվիրիշվիլին Ազգային բանկի նախագահի պաշտոնը զբաղեցրել է նրանից հետո, երբ այս տարվա մարտի 2-ին ավարտվել է Կոբա Գվենետաձեի պաշտոնավարման յոթամյա ժամկետը:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆ

ՍԽԱՆՔԱՆՔԻ. ՃԱՆԱԳՈՐԶՆԵՐԻ ՍԽԱՆՔԱՆՔԻ ԱՆՏՆԱԿԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ՍՈՒՆԻՅԻ ԴԱՆՏԵՏԻ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ



Ախալքալաքի մունիցիպալիտետի գյուղերի հավաքի-Դավմիա-Էրինջա ճանապարհահատվածում ասֆալտապատման վերականգնողական աշխատանքները շարունակվում են:

Աշխատանքային ընթացքը տեղում ստուգել է Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետ Մելքոն Մակարյանը՝ իր տեղակալ Թեյմուրազ Մճեղիձեի եւ վերահսկողական ծառայության այլ ներկայացուցիչների հետ:

Ծրագրի ֆինանսավորվում է մարզերի զարգացման հիմնադրամից եւ տեղական բյուջեից, իսկ արժեքը կազմում է 2 538 000 լարի:

Շարունակվում է Չունջխա-Պտենա-Դիլիսկա ճանապարհի կառուցումը: Այս փուլում կառուցվում է 1743 մետր երկարությամբ ճանապարհի Չունջխա գյուղից դեպի Պտենա գյուղ:

Ծրագրի ընդհանուր արժեքը 1 մլն 051,420 լարի է: Ծրագիրը ֆինանսավորվում է Տարածաշրջանային զարգացման հիմնադրամի եւ տեղական բյուջեի միջոցներով, մրցույթը շահել է «Ջավախավտոգզա» ընկերությունը:

Շարունակվում է Աբուլ-Կարտիկան ճանապարհի շինարարությունը, այս փուլում կառուցվում է 4048 մետր երկարությամբ ճանապարհի Աբուլ գյուղից դեպի Կարտիկան գյուղի ուղղությամբ:

Նախագծի ընդհանուր արժեքը 1 միլիոն 862 հազար 390 լարի է:

ՆԻՆՈՏՄԻՆՂԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԳԻՊՈՒՄ՝ ՔԱՂԱՔԱԳԻՏՎԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԱՆՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՎ

Նինոտմինղա քաղաքի «Մշակույթի տան» դիմաց տեղի ունեցավ տեղեկատվական հանդիպում քաղաքացիական բյուջեի պլանավորման մասին:

Քաղաքացիական բյուջեի ծրագրի համար 2024 թվականին տեղական բյուջեից նախատեսված է 20 000 լարի:

Նշված գումարով կֆինանսավորվեն բնակչության կողմից ներկայացված նախագծերը:

Հանդիպմանը մասնակցեցին Նինոտմինղայի մունիցիպալիտետի փոխքաղաքապետ՝ Ալեքսանդրե Միքելաձեն, քաղաքապետարանի եւ ավագանու աշխատակիցներն ու հետաքրքրվող անձիք:

Նախագծեր ներկայացնելու հնարավորություն ունեն Վրաստանի այն քաղաքացիները, ովքեր գրանցված են կամ ապրում են Նինոտմինղայում:

Նախագծի իրականացումը պետք է լինի Նինոտմինղայի մունիցիպալիտետի կողմից:

դայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի իրավասությունների շրջանակներում ու ծառայի բնակչության բարեկեցությանը եւ ոչ թե մասնավոր բիզնեսի շահերին:

Ընտրված նախագծերը կֆինանսավորվեն մունիցիպալ բյուջեից, քաղաքացիական բյուջեի ծրագրի շրջանակներում, քաղաքացիների կողմից նախագծի իրականացման համար հատկացված գումարով:

Նախագծերի ընտրման համար վերջնական որոշումը քաղաքացիները կկայացնեն ընտրության արդյունքում:

ՍՈՒՆԵՈՒԼԻ ՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԵՆ ՍԱՀՄԱՆՓՈՎ ԶԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՆՉԱՆՅ ՀԱՐՑՆԵՐԸ

Մառնեուլիում հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող խորհուրդը հերթական աշխատանքային խորհրդակցություն է անցկացրել, որտեղ քննարկել են առկա մարտահրավերները:

Նիստը վարել է Մառնեուլիի փոխքաղաքապետ, հաշմանդամություն ունեցող անձանց խորհրդի նախագահ Թեմուր Շուրթիձեն:

«2020 թվականին Մառնեուլիի քաղաքապետարանին կից ստեղծված խորհուրդը սահմանում է այնպիսի առաջնահերթ ուղղություններ հատուկ կարիքներ ունեցող անձանց համար, ինչպիսիք են մասնակցությունը մշակութային եւ ստեղծագործական միջոցառումներին, կրթական ու ճանաչողական գործունեության խթանումը, սոցիալական պաշտպանության ապահովումը, հարմարեցված միջավայրի ստեղծումն ու ինտեգրումը հասարակությանը», - նշվում է տեղեկատվության մեջ:

ՆԱԽԱԳԱՅՎԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ - ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐ

ՍԱԼՈՍԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻՆ ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐՅԵՑ ՆԻԿԱ ԳԱՎԱՐԱՄԻԱՅԻՆ



Հունիսի 22-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ստորագրեց «Մթավարի» հեռուստաընկերության գլխավոր տնօրեն Նիկա Գվարամիային ներում շնորհելու հրամանագիրը:

Հունիսի 22-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ստորագրեց «Մթավարի» հեռուստաընկերության գլխավոր տնօրեն Նիկա Գվարամիային ներում շնորհելու հրամանագիրը:

Հունիսի 22-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ստորագրեց «Մթավարի» հեռուստաընկերության գլխավոր տնօրեն Նիկա Գվարամիային ներում շնորհելու հրամանագիրը:

Հունիսի 22-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ստորագրեց «Մթավարի» հեռուստաընկերության գլխավոր տնօրեն Նիկա Գվարամիային ներում շնորհելու հրամանագիրը:

Հունիսի 22-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ստորագրեց «Մթավարի» հեռուստաընկերության գլխավոր տնօրեն Նիկա Գվարամիային ներում շնորհելու հրամանագիրը:

Հունիսի 22-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ստորագրեց «Մթավարի» հեռուստաընկերության գլխավոր տնօրեն Նիկա Գվարամիային ներում շնորհելու հրամանագիրը:

Հունիսի 22-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ստորագրեց «Մթավարի» հեռուստաընկերության գլխավոր տնօրեն Նիկա Գվարամիային ներում շնորհելու հրամանագիրը:

Այսօր եւ ստորագրել եմ Նիկա Գվարամիային ներում կիսվել այս որոշման հետ կապված որեւէ պարզաբանմամբ,

ԳԻՐԳԻ ՎՈԼՍԿԻ. «ԳՎԱՐԱՄԻԱՅԻՆ ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐՅԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ԾԱՆՐ ԿԱՆԳՐԱԴԱՌՆԱ ՍԱԼՈՍԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ»



Վրաստանի խորհրդարանի առաջին փոխխոսնակ Գիորգի Վոլսկին, մեկնաբանելով Սալոմե Զուրաբիշվիլու կողմից Նիկա Գվարամիային ներում շնորհելու որոշումը, հայտարարեց, որ այն բացասաբար կանդորդառնա Սալոմե Զուրաբիշվիլու քաղաքական կենսագրության վրա:

Գիորգի Վոլսկին կարգաբանումներ ներկայացնել, նշանակում է, որ նախագահն անտեսում է հանրության կարծիքը:

Ի հարկե, հանրությանը վտանգ չի սպառնում, չնայած այն զգացումը, որ թիկունքում ինչ-որ պայմանավորվածություններ են եղել եւ նման որոշման ընդունումը մնում է առանց պարզաբանման, հասարակության մեծ մասի մոտ կթողնի անարդարության զգացում, քանի որ ծանր հանցագործություն է կատարվել: Եվ նման պայմաններում ոչ մի պարզաբանում, ոչ մի բացատրություն հանրությանը: Սա իսկապես նվաստացնող է,- հայտարարեց Գիորգի Վոլսկին:

Գիորգի Վոլսկին կարգաբանումներ ներկայացնել, նշանակում է, որ նախագահն անտեսում է հանրության կարծիքը:

Ի հարկե, հանրությանը վտանգ չի սպառնում, չնայած այն զգացումը, որ թիկունքում ինչ-որ պայմանավորվածություններ են եղել եւ նման որոշման ընդունումը մնում է առանց պարզաբանման, հասարակության մեծ մասի մոտ կթողնի անարդարության զգացում, քանի որ ծանր հանցագործություն է կատարվել: Եվ նման պայմաններում ոչ մի պարզաբանում, ոչ մի բացատրություն հանրությանը: Սա իսկապես նվաստացնող է,- հայտարարեց Գիորգի Վոլսկին:

Գիորգի Վոլսկին կարգաբանումներ ներկայացնել, նշանակում է, որ նախագահն անտեսում է հանրության կարծիքը:

ՆԱԽԱԳԱԶԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԵՎԱՋԵՅՆԻ ՎՐԱՍԱՆՈՒՄ ԲԵՎԵՌԱԿԱՆԱՅՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Վրաստանում ԱՄՆ դեսպան Քելի Դեզմանը հայտարարեց, որ ԱՄՆ-ը ողջունում է Նիկա Գվարամիային ներում շնորհելու մասին Վրաստանի նախագահի որոշումը: Դեսպանի խոսքով, նախագահն իր որոշմամբ նշանակալի ավանդ է ներդրում Վրաստանում բեռնակամացման աստիճանի նվազեցման ու հասարակության պառակտման վերացման գործում:



ԱՌՈՂՋԱՊԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԼՅԱՐԴԻ ՓՈԽՊԱՏՎԱՍՏԱՆ ՎԻՐԱՐԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԿՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՑ

Վրաստանի բռնագաղթվածների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Զուրաբ Ազարաշվիլու հայտարարությամբ, պետությունն ամբողջությամբ կֆինանսավորի լյարդի փոխպատվաստման վիրահատությունը:

Նախարարի խոսքով, մինչ այժմ վիրահատությունը ֆինանսավորվում էր մասամբ, սակայն այսուհետ ե՛լ ախտորոշման, ե՛լ վիրահատության ծախսերը ամբողջությամբ կֆինանսավորվեն:

Կառավարության միստում կարելու որոշումներ ենք ընդունել: Հարցերից մեկը վերաբերում է օրգանների փոխպատվաստման

բյուջեի փոփոխություններին: Լյարդի փոխպատվաստման դեպքում, պետությունը 120 հազար լարիի վիրահատությունը ֆինանսավորել է ընդամենը 70 հազար լարիով: Շատ դեպքերում խոսքը մի հատվածի մասին է, որ տեղ դժվար է մոբիլիզացնել մնացած 50 հազար լարին, եւ այդ պատճառով մենք որոշում ենք կա-

յացրել ամբողջությամբ ֆինանսավորել վիրահատության ծախսերը՝ կապված թե՛ ախտորոշման, թե՛ վիրահատության հետ: Լյարդի փոխպատվաստման դեպքում 120 հազար լարին այսօրվանից ամբողջությամբ կհատկացվի պետության կողմից,- ասաց Զուրաբ Ազարաշվիլին:

Լյարդի փոխպատվաստման դեպքում 120 հազար լարին այսօրվանից ամբողջությամբ կհատկացվի պետության կողմից,- ասաց Զուրաբ Ազարաշվիլին:

ԵՐԵՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՍՈՒԼԻՆ ՈՒ ԲՈՒԺՄԱՆ ՄՅՈՒՆ ՆՅՈՒԹԵՐԸ ՏՐՎՈՒՄ ԵՆ ԱՆՎՃԱՐ

Վրաստանի օկուպացված տարածքներից ներքին տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական հարցերով նախարար Զուրաբ Ազարաշվիլին առաջին կարգի շաքարային դիաբետով (շաքարախտ) հիվանդ երեխաների ծնողներին հետ հանդիպմանը հայտարարեց, որ հունիսի 1-ից ինսուլինի եւ շաքարային դիաբետի բուժման համար նախատեսված նյութերի

պաշարները թեստավորման պարագաներ եւ արյան ստուգման անեղները, տրամադրվում են անվճար: Բացի այդ, ծնողներն ու շահառուները ինսուլինի հետ միասին նույն վայրում կստանան սպառվող նյութեր եւ այլևս ստիպված չեն լինի գնալ տարբեր հասցեներով, ընդ որում՝ հնարավորություն կունենան ցանկացած պահի մատակարարումներ ստանալ իրենց համար սահմանված քանակից 10 օր առաջ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

200-ԱՎԱՆ ԼԱՐԻ՝ ՍՈՑԻԱԼԱԳԵՍ ԱՆԱՊԱՅՈՎ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ



Ինչպես հայտարարեց Վրաստանի առողջապահության նախարար Զուրաբ Ազարաշվիլին, այս տարվա հուլիսից սոցիալապես անապահով երեխաներն ամսական կստանան 200-ական լարի:

Նախարարի պարզաբանմամբ, դրա հիման վրա ծրագրի բյուջե կավելացվի 70 մլն լարի:

Երկրորդ խնդիրը վերաբերում էր սոցիալապես անապահով երեխաներին, եւ մենք արդեն հայտարարել էինք, որ այս տարվա հուլիսից օգնությունը դարձավ 200 լարի: Ընդհանուր առմամբ, այս տարվա բյուջեին կավելացվի 70 մլն լարի, եւ մենք արդեն 200 լարիի օգնություն ենք վճարելու նման երեխաներին: Տարվա ընթացքում սոցիալապես անապահով երեխաներին կվճարենք ամսական 200 լարի օգնություն, ընդհանուր առմամբ՝ մինչեւ կես միլիարդ լարի, - կառավարության ճիստի ավարտից հետո կայացած ճեպագրույցում ասաց Զուրաբ Ազարաշվիլին:

ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ ԲՆԱԿԱՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2022 թվականին Վրաստանի բնակչության միջին ամսական ծախսերը կազմել են 1 մլն 551,9 հազար լարի, ինչը 20,3 տոկոսով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից:

Տեղեկատվության համաձայն, մեկ տնային տնտեսության միջին ամսական ծախսերն աճել են 22 տոկոսով եւ կազմել 1413,6 լարի, իսկ մեկ անձի հաշվով՝ 21,7

տոկոսով եւ կազմել 420,7 լարի: Նույն տվյալների համաձայն, 2022 թվականին նախորդ տարվա համեմատ, տնային տնտեսությունների սպառողական կանխիկ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում աճել է 1,4 տոկոսով եւ կազմել 71,5 տոկոս:

Վրաստանի բնակչության ընդհանուր ծախսերը քաղաքատիպ բնակավայրերում աճել են 19,2 տոկոսով եւ կազմել 951,5 մլն լարի, իսկ գյուղական բնակավայրերում աճել են 22,2 տոկոսով եւ կազմել 600,4 մլն լարի:

Ըստ 2022 թվականի տվյալների, սպառողական դրամական ծախսերի կառուցվածքում ամենամեծ մասնաբաժինը շարունակում են մնալ սննդի, խմիչքի ու ծխախոտի ծախսերը՝ կազմելով 41,8 տոկոս, ինչը 1,9 տոկոսային կետով պակաս է նախորդ տարվա համանման ցուցանիշից:

ԿԵՆՍԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՄԻՋԻՆ ԳՈՒՄԱՐՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է

Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2023 թվականի մայիսին, նախորդ ամսվա համեմատ, կենսապահովման միջին չափն աճել է 1,9 լարիով:

Ըստ տվյալների, նախորդ ամիս աշխատունակ տարիքի տղամարդու կենսապահովման նվազագույն չափը կազմել է 253,7 լարի: Մինչդեռ 2023 թվականի ապրիլին այս ցուցանիշը կազմում էր 251,8 լարի:

2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, 2023 թվականի մայիսին աշխատունակ տարիքի տղամարդու ապրուստի նվազագույն չափն ավելացել է 8,6 լարիով: 2022 թվականի մայիսին ապրուստը կազմել է 245,1 լարի:

Ի դեպ, կենսապահովման մակարդակը սահմանվում է նվազագույն պարենային զամբյուղի հիման վրա: Նվազագույն պարենային զամբյուղը պարենային ապրանքների սահմանված նորմատիվ զամբյուղ է, որը պարունակում է աշխատունակ տարիքի մարդու բնականոն

կյանքի եւ աշխատունակության ֆիզիոլոգիապես անհրաժեշտ սննդի քանակը:

ԱՃԵԼ Է ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

2023 թվականի ապրիլի Ներդրումային պորտֆելի հաշվետվության համաձայն, կենսաթոշակային ֆոնդի գուտ եկամուտները ֆոնդի գործարկումից (2019 թվականի հունվարի 1) մինչեւ 2023 թվականի ապրիլը կազմել են 44,11, իսկ իրական եկամուտները (ճշգրտված գնաճով) նույն ժամանակահատվածում՝ 5,62 տոկոս: Այս մասին նշված է Կենսաթոշակային գործակալության ներդրումային ծառայության ապրիլյան հաշվետվության մեջ:

«2023 թվականի ապրիլի 30-ի դրությամբ, կենսաթոշակային ակտիվների արժեքը կազմել է 3,34 մլրդ լարի: Դրանից ներդրումային գործունեության արդյունքում ստացված գուտ շահույթը կազմում է 510 մլն լարի», - նշվում է Կենսաթոշակային գործակալության տեղեկատվության մեջ:

ՀԱՑԻ ԹԱՆԿԱՑՈՒՄ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ

Վրաստանի կառավարության որոշմամբ, Վրաստանում կսահմանվի ալյուրի ներկրման համար ժամանակավոր ներմուծման վճար:

Որոշման համաձայն, փոփոխությունն ուժի մեջ է մտել հունիսի 12-ից եւ կգործի մինչեւ նոյեմբերի 1-ը:

Ըստ որոշման, 200 կիլոգրամից ավելի յուրաքանչյուր 1 կգ-ի վճարը կկազմի 20 թեթրի, ինչը նշանակում է, որ 1 տոննայի վճարը կկազմի 200 լարի:

Վրաստանի «Հաց արտադրողների ասոցիացիայի» ղեկավար Մալխազ Դոլիձեն հայտարարել է, որ եթե մեկ տոննայի համար 200 լարի մաքսատուրը սահմանվի, ապա հացի գինը չի բարձրանա:

ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱԼ

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԻՋՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

Վրաստանի խորհրդարանի կոմիտեներն արդեն ձեռնամուխ են եղել միջքաղաքային ուղեւորների եւ բեռնափոխադրումների բարեփոխումների նախագծի քննարկմանը, ըստ որի, վերոնշյալ փոխադրումների համար վարորդներից կպահանջվի հատուկ թույլտվություն:

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում իրականացվելիք փոփոխությունների համաձայն, օրենքի ընդունումից հետո, փոխադրումներով իրավասու կլինեն զբաղվել միայն նրանք, ովքեր այն իրականացնում են համապատասխան հատուկ թույլտվության առկայության դեպքում: Թույլտվությունը կարող է լինել միանվագ կամ բազմակի:

Ըստ ներկայացված նախագծի, Վրաստանի իշխանությունները նման դեպքերում կհատկացնեն երեք տեսակի թույլտվություն. թույլտվություն՝ ուղեւորափոխադրումների, թույլտվություն միջազգային բեռնափոխադրումների եւ թույլտվություն՝ միջազգային սահմանվածից ավելի օտարերկրյա փոխադրողների բեռնափոխադրումների համար:

Թույլտվությունները կհատկացվեն առանց մրցույթի եւ դրանց հանձնման կարգը սահմանվելու է Վրաստանի կառավարության հատուկ որոշմամբ:

Բացի այդ, վերոնշյալ փոփոխությունների ընդունման դեպքում, վրացական օրենսդրությունում կհայտնվի «ավտոկայարան» հասկացությունը: «Ավտոկայարան» հասկացությունը նախատեսում է տեխնիկական պահանջներին համապատասխան կարգավորված վայր, որի նպատակն է կարգավորել ուղեւորների փոխադրումը, որտեղից սահմանված կանոններով համապատասխան թույլտվության դեպքում, հնարավոր կլինի իրականացնել միջքաղաքային կամ ոչ պարբերական ուղեւորափոխադրումները: Ընդ որում, յուրաքանչյուր նման ավտոկայարան կունենա հատուկ հավաստագիր, որով հաստատվելու է դրա համապատասխանությունը տեխնիկական պահանջներին:

Իրենց հերթին, ավտոկայարանները կբաժանվեն երեք կարգի՝ առաջինը, որտեղից կիրականացվեն միջքաղաքային


ուղեբերը կամ միջքաղաքային եւ շրջանային ուղեւորափոխադրումները: Երկրորդը, որտեղից կիրականացվեն ներքին փոխադրումները, իսկ ինչ վերաբերում է միջազգային փոխադրումներին, ապա դրանք կիրականացվեն առաջին կարգի ավտոկայարանի բացակայության դեպքում:

Երրորդ կարգի ավտոկայարանը թույլ կտա իրականացնել ներքաղաքային փոխադրումներ, իսկ ինչ վերաբերում է միջքաղաքային եւ միջազգային ուղեբերին, ապա երրորդ կարգի ավտոկայարաններն այն կարող են իրականացնել առաջին եւ երկրորդ կարգի ավտոկայարանների բացակայության կամ դրանց թողարկման անբավարար հնարավորության դեպքում:

Ներկայացված օրինանախագծով Վրաստանի օրենսդրությունը կվերադարձվի նաեւ «ավտոբուս» հասկացությունը, այսինքն տրանսպորտային միջոց, որը նախատեսված է ութ եւ ավելի տեղեր ունեցող ու ընդհանուր 5 տոննա քաշով ուղեւորափոխադրումների համար:

Բացի այդ, ուղեւորափոխադրումներ

կկարողանան իրականացնել նաեւ մինչեւ ութ մատուցող ունեցող տրանսպորտային միջոցները, 5 տեղանոց մինիվեները, ինչպես նաեւ 5 տոննայից ավելի քաշով տրանսպորտային միջոցները, որոնք ունեն 8 եւ ավելի ուղեւորատեղ: Մուծիցիպալիտետի սահմաններում պարբերական ուղեւորափոխադրումներ կիրականացվեն մուծիցիպալտետի կողմից հաստատված երթուղիներով: Ինչպես նշեցինք ուղեւորաբեռնափոխադրումների համար կառավարության կողմից սահմանվում են երեք կարգի թույլտվություններ: Ինչ վերաբերում է թույլտվությունների սակագինին, ապա, ներկայացված նախագծի համաձայն, միջազգային բեռնափոխադրումների թույլտվության սակագինը կազմում է 500 լարի: 500 լարի արժե նաեւ ավտոմոբիլային ուղեւորափոխադրման սակագինը: Թեեւ այս պարագայում օրինանախագծով սահմանված է անցումային փուլ, եւ մինչեւ 2025 թվականի մայիսի 1-ը վերոնշյալ թույլտ-



վությունը հնարավոր կլինի ստանալ 100 լարիով: Վրաստանի տարածքից միջազգային բեռնափոխադրման միանվագ թույլտվությունը (սահմանված քվոտայից ավելի), որը իրականացնում է օտարերկրյա փոխադրողը, կարժենա 1500 լարի:

Նշենք, որ այսօրվա դրությամբ, վիճակագրության համաձայն, ուղեւորափոխադրումներով զբաղված է 4125 մարդ, իսկ միջազգային բեռնափոխադրումներով՝ 4500: Վերոնշյալ օրինագծի ընդունման դեպքում, պետական բյուջեն եկամտի տեսքով բարեփոխման առաջին տարում կստանա 4 312 500, իսկ հաջորդ երեք տարիներին՝ կես միլիոն լարի եկամուտ:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ ԿԵՍԱՑՎԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱՅԱՆՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԵՐԱՀՍՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի խորհրդարանը, պաշտպանելով Թբիլիսիի քաղաքապետարանի նախաձեռնությունը, արդեն քննարկել է առաջին ընթերցմամբ ընդունել է տրանսպորտային միջոցների արտահանումների վերահսկողության խստացման օրինանախագիծը:

Ինչպես հայտարարեց Վրաստանի «Ավտոմեքենաների տեսչական մարմինների ասոցիացիայի» նախագահ Վաժա Իորդանիշվիլին, ճանապարհների տրանսպորտային միջոցների արտահանումների վերահսկումը հավանաբար կսկսվի սեպտեմբերից: - Այս մեխանիզմի կիրառումը կվստահվի Բնապահպանական վերահսկողության ծառայությանը, ինչը հետագայում կնպաստի բարեփոխման առաջընթացին, - ասաց Վաժա Իորդանիշվիլին:

Անդրադառնալով տրանսպորտային միջոցների տեխնոլոգիաների փոփոխությանը, Իորդանիշվիլին նշեց, որ այս ուղղությամբ իրականացված փոփոխությունների արդյունքում նախորդ ամիս տեխնոլոգիաների քանակն աճել է 20 տոկոսով: Նրա խոսքով, Վրաստանում գրանցված է 1 մլն 600 հազար ավտոմեքենա, որոնցից 800 հազարը տեխնոլոգիաներն են ենթարկվել: Տեխնոլոգիաների քանակը կազմում է 200 հազարից ավելի է:

Նշենք, որ նախատեսվում է ճանապարհների տրանսպորտային միջոցների արտահանումները վերահսկել հատուկ սարքերով: Համապատասխան օրինագիծը նախաձեռնվել է խորհրդարանում, եւ օրենսդիր մարմինն առաջին ընթերցմամբ աջակցել է նախագծին: